ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 21 » մարտի 2024թ. № 83-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0032-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Լեջան, 1-ին փողոց, թիվ 2/1 հողամաս փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2024թ. մարտի 21
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 21 » մարտի 2024թ. № 84-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԼԵՋԱՆ 5-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ 0.0564 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՆՇՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԵՆՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27.10.2023Թ. ԹԻՎ 201-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով, 62-րդ հոդված 3-րդ կետով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ, ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 714-Ն որոշման «է» կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 3-րդ կետի «է» ենթակետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 որոշմամբ, հիմք ընդունելով Էդիկ Վաղինակի Մարգարյանի կողմից ներկայացված դիմումը, 15.03.1991թ. հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի թիվ 04 որոշումից քաղվածքը, 16.04.1996թ-ի թիվ 1-1-8 կազմված սեփականության վկայագիրը, 13.10.2023թ.-ին «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը և այն հանգամանքը, որ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.0564 հա հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Վերականգնել Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Լեջան 06-038-0024-0001 ծածկագրում գտնվող 0.0564 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի 06-038-0024-0001 ծածկագրի հողամասի մակերեսը 0.0564 հա

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն 13.10.2023-ին. «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.0564 հա մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, անհատույց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Էդիկ Վաղինակի Մարգարյանին, Մարինե Զավենի Աբրահամյանին, Գոհար Էդիկի Մարգարյանին և Արտաշես Էդիկի Մարգարյանին:
3. 06-038-0024-0001-001 կադաստրային ծածկագրի բնակարանի գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի տուն գործառնական նշանակության:
4. ՀՀ Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Լեջան 06-038-0024-0001 կադաստրային ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 57.36 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 11.8 քմ. մակերեսով բաց պատշգամբի, 54.24 քմ ներքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի, 13.18 քմ մակերեսով բաց պատշգամբի, 39.17 քմ ներքին մակերեսով անասնագոմի, 38.7քմ մակերեսով ծածկի և 11.98 քմ մակերեսով պարիսպների նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Էդիկ Վաղինակի Մարգարյանի, Մարինե Զավենի Աբրահամյանի, Գոհար Էդիկի Մարգարյանի և Արտաշես Էդիկի Մարգարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
5. Համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի և կադաստրային քարտեզի, առկա է 73.8 քմ ընդհանուր համատեղ օգտագործման հողամաս 06-038-0024-0001-001, 06-038-0024-0002-001, 06-038-0024-0003-001 և 06-038-0024-0004-001 կադաստրային ծածկագրերի անշարժ գույքերի համար:
6. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Մարզ Լոռի, համայնք Լոռի Բերդ գյուղ Լեջան 5-րդ փողոց 8 բնակելի տուն:
7. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 27.10.2023թ. թիվ 201-Ա որոշումը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

2024թ. մարտի 21
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » մարտի 2024թ. № 85-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 58-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը՝

որոշում եմ.

1. Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Գ.տ
2024թ.մարտի 22
գ. Լոռի Բերդ

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2024թ. մարտի 22-ի № 85 -Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Քրիստինե Արայիկի Մելիքջանյան - 30000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
2. Սյուզաննա Սարիկի Սաքանյան - 30000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
3. Վահե Շահենի Ջիլավյան - 40000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
4. Անահիտ Հրայրի Գրիգորյան - 40000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
5. Անի Բորիկի Դանիելյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
6. Լյուբա Գուրգենի Աբրահամյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Բովաձոր
7. Ռուսլան Գագիկի Չոբանյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
8. Արտակ Վալերիկի Անտոնյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքների մասնակցելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
9. Ժաննա Հրաչյայի Վահրամյան – 20000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքների մասնակցելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
10. Մարինե Շալիկի Սարգսյան – 20000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքների մասնակցելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
11. Թամարա Գարիկի Մելիքջանյան – 20000 ՀՀ դրամ, հոր 25-օրյա վարժական հավաքների մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
12. Կարեն Տիգրանի Աբովյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքների մասնակցելու կապակցությամբ, գյուղ Հովնանաձոր:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ